

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

### ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻՆ ԿԻՑ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

2021 թվականի մարտի 2-ին, ժամը 19.00-ին, Երևանի քաղաքապետարանում՝ Երևանի Արգիշտիի փողոց 1 հասցեում, տեղի ունեցավ Երևանի քաղաքապետին կից երիտասարդության հարցերի խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 1-ին նիստը, որին Խորհրդի 20 անդամներից մասնակցում էին 19-ը:

Նիստը վարում էր Խորհրդի նախագահ, Երևանի քաղաքապետ Հայկ Մարությանը: Նիստի օրակարգի 1-ին կետի համաձայն՝ բացման խոսքով հանդես եկավ Խորհրդի նախագահ Հայկ Մարությանը: Ողջունելով ներկաներին՝ քաղաքապետը փաստեց, որ Խորհրդի առաջին նիստի անցկացումը կարևոր իրադարձություն է համայնքի կյանքում: Հայկ Մարությանն իր ելույթում կարևորեց քաղաքի զարգացման հարցերում, որոշումների կայացման գործընթացներում երիտասարդության ավելի լայն ներգրավվածության խթանումը, երիտասարդների զբաղվածության հիմնախնդիրների լուծման և երիտասարդների շրջանում կամավորական աշխատանքի և կամավորության մշակույթի խթանման անհրաժեշտությունը:

Նիստի օրակարգի 2-րդ կետի համաձայն՝ Խորհրդի քարտուղար, Երևանի ավագանու անդամ Գրիգոր Երիցյանը ներկայացրեց Երևանի երիտասարդական բնագավառի զարգացման հնգամյա ծրագիրը, 2021թ. մեկամյա զարգացման ծրագիրը և վերջիններիս իրականացման ճանապարհային քարտեզը:

Ներկայացված ծրագրերի և Երևանի երիտասարդական քաղաքականության վերաբերյալ առաջարկներով և հարցերով հանդես եկան Խորհրդի անդամներ Տիգրան Ավագյանը, Կալիպտո Բզնունին, Հովհաննես Աղաջանյանը, Արմենուի Հովհաննիսյանը, Անի Հովսեփյանը, Գրիգոր Զանիկյանը, Անգելինա Ալեքսանյանը, Դավիթ Մուրադյանը, Նաիրա Դարբինյանը, Մարգարիտա Դադյանը, Սամվել Բիրինյանը, Ռաֆֆի Գյոզալյանը և Աննա Թովմասյանը՝ կարևորելով Երևան քաղաքի երիտասարդական քաղաքականության մշակման ընթացքում հետազոտությունների իրականացման և մայրաքաղաքի երիտասարդների կարիքների գնահատման, միասնական երիտասարդական հարթակի ստեղծման, տեղեկատվության հասանելիության, միջազգային ծրագրերին ներգրավվածության,

միջազգային կազմակերպությունների և տեղական ՀԿ-ների հետ համագործակցության, արդի մարտահրավերներով պայմանավորված՝ թիրախային խմբերին առաջնահերթություն տալու և այդ խմբերի ներառականությունն ապահովելու, ազգային փոքրամասնությունները ներկայացնող երիտասարդների ներգրավվածությունն ապահովելու, համայնքային երիտասարդական կենտրոնների հիմնադրման, համայնքային կառավարման մեջ Երևան համայնքի երիտասարդների և երիտասարդական կազմակերպությունների մասնակցության և ներգրավման անհրաժեշտությունը:

Ի պատասխան բարձրացված հարցերի՝ սպառիչ պատասխաններով հանդես եկան Խորհրդի նախագահ Հայկ Մարությանը, Խորհրդի նախագահի տեղակալ Գայանե Մելքոն Մելքոնյանը և Խորհրդի քարտուղար Գրիգոր Երիցյանը:

**ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ**



**Հ.ՄԱՐՈՒԹՅԱՆ**